ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/23, 17.02.2022թ.

Շտկման ամսաթիվը՝ 23.02.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1»

Գնման առարկան՝ սննդամթերքի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրերով գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել ընթացակարգը,
2. պարտավորեցնել հայտարարել նոր ընթացակարգ,

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Բողոք բերող անձ՝ Ա/Ձ Արփինե Ռազմիկի Կարապետյան
Ն/ք՝ N 000263798,տրվ.11.11.2012թ, 003-կողմից
Սպասարկող բանկի անվանումը՝ « Ագբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ, Շենգավիթ մ/ճ»
Հաշվեհամարը ՝ 220098357381000
ԻՐԱՎ. ՀԱՍՑԵ՝ ՀՀ, ք. Բագրատունյաց 21/2
ԳՈՐԾ. ՀԱՍՑԵ՝ Բագրատունյաց 21/2
Էլեկտրոնային փոստի հասցեն է՝arpkar2011@mail.ru
Հեռախոսահամարն է՝ +(374) 41 010663
Պատվիրատուի անվանումը՝ <<Երևանի քաղաքապետարան>>
Հասցե՝ ք. Երևան, Արգիշտի 1
Գնման Ընթացակարգի ծածկագիրը՝ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1
Առարկան՝ սննդամթերքի մատակարարում

Բ Ո Ղ Ո Ք

ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով
գնման ընթացակարգի վերաբերյալ

Ա/Ձ Արփինե Ռազմիկի Կարապետյանի բողոքի առարկան, բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները և պահանջը

Բողոքի առարկան՝ 03.02.2022թ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթ: 12.02.2022թ-ին իմ կողմից պարզաբանում է պահանջվել հրավերի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ: Պարզաբանումը ուղարկվել է Պատվիրատուի կողմից 15.02.2022թվականին՝ հրավերով պարազաբանման համար նախատեսված ժամկետի խախտմամբ: <<Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ **հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում**>>: Բանկի կողմից հայտի ապահովման կապակցությամբ նիստ էր նշանակված 15.02.2022թ ժամը 10:00-ին: Պատվիրատուի

ժամկետային ոչ ճիշտ աշխատանքի պատճառով Ա/Ձ Արփինե Ռազմիկի Կարապետյանը չի կարողացել մասնակցել նիստին, քանի որ գնային առաջարկի ձևավորումը կախված էր Պատվիրատուի պարզաբանումից: Հաշվի առնելով վերը նշվածը Ա/Ձ Արփինե Ռազմիկի Կարապետյանը կարող է մասնակցել միայն այն չափաբաժիններին, որոնք չեն պահանջում հայտի ապահովում: Այստեղ խախտվում է նաև մրցակցության իրավունքը:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները

Համաձայն հրավերի I մասի 3.1 կետի, ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի
Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում

Բողոքի պահանջը

Ուստի ելնելով վերոգրյալից Ա/Ձ Արփինե Ռազմիկի Կարապետյանը խնդրում է բողոքը քննող անձին համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի.

1. դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման մրցույթը:
2. պարտավորեցնել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովին հայտարարել նոր մրցույթ:

Այլ տեղեկություններ

Բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը:
Ա/Ձ Արփինե Ռազմիկի Կարապետյանի նույնականացման քարտի պատճենը:

Ադռիր թերթ: 2

Ա/Ձ Արփինե Ռազմիկի Կարապետյան՝ _____

17.02.2022թ.